Ա. Բ. ԿԱՐԻՆՅԱՆ

Սույն թվականի մայիսի 29-ին վախճանվեց Հայաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, 1907 թ. կուսակցության անդամ, Հայկական ՍՍՀ գիտության վաստակավոր գործիչ, սոցիալիստական աշխատանքի հերոս Արտաշես Բալասի Կարինյանը (Գաբրիելյան)։

Արտաշես Կարինյանը անցել է քաղաքական պայքարի, կուսակցական և գիտական-ստեղծագործական աշխատանքի երկարամյա ճանապարհ։ Նա ծնվել է 1886 թ. Բաքու քաղաքում, նավթահանքերի վարպետի ընտանիքում։ Դեռևս 1907 թ., երբ ուսանում էր Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետում, Կարինյանն ընդունվում է ՌՍԴԲԿ շարքերը։ Նույն թվականին նա մի խումբ ուսանողների հետ ուղևորվում է Ֆինլանդիայի Տերիոկի քաղաքը, որտեղ մասնակցում է ՌՍԴԲԿ Պետերբուրգի կոմիտեի կողմից կազմակերպված խորհրդակցությանը և լսում Վլադիմիր Իլյիչ Լենինի ելույթը։

1910 թ. Ա. Կարինյանը ավարտում է համալսարանը և վերադառնալով Բաքու, Ստեփան Շահումյանի ղեկավարությամբ անցնում է հեղափոխական-պրոպագանդիստական աշխատանքի։ 1913 թ. նա ձերբակալվում է և արտաքսվում Բաքվից։ Փետրվարյան հեղափոխությունից հետո Կարինյանը կրկին վերադառնում է Բաքու, մասնակցում Անդրկովկասում սովետական իշխանության հաստատման համար մղվող պայքարին։ 1918 թ. ապրիլին նա նշանակվում է Բաքվի կոմունայի արդարադատության կոմիսար և խմբագրում «Известия бакинского совета» թերթը։

Բաքվի կոմունայի անկումից հետո Արտաշես Կարինյանն աշխատում է Մոսկվայի Աղգությունների կոմիսարիատին կից հայկական գործերի կոմիսարիատում որպես բաժնի վարիչ, որտեղ միաժամանակ խմբագրում է «Կոմունիստ» ամսագիրը և «Կարմիր դրոշակ» թերթը։

Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո Կարինյանը գործուղվում է Երևան։ Այստեղ նա աշխատում է իբրև հանրապետության արդարադատության ժողովրդական կոմիսար, Հայաստանի կենտգործկոմի նախագահ (1924—1928), ապա լուսավորության ժողկոմի տեղակալ (1929—1930)։ Այս տարիներին նա խմբագրել է «Նոր ուղի» (Երևան) և «Народное хозяйство Закавказья» (Թիֆլիս) պարբերականները, հանդես եկել նաև հրապարակախոսական, բանավիճային հոդվածներով։ «Իմպերիալիստական պատերազմը և Հայաստանը» հոդվածաշարում (1925) Կարինյանը մերկացրել է արևմտյան իմպերիալիզմի

հանցավոր դերը արևմտահայության ողբերգության գործում։ «Հայ ազգայնականների ուղին» (1926), «Նացիոնալիզմի «նոր դիրքերը» (1928) գրքերում զետեղված հոդվածներով նա հակահարված է տվել արտասահմանյան երկրներում գործող և միջազգային ռեակցիային հարած հայ գրչակների՝ Սովետական Հայաստանի դեմ ուղղված զրպարտչական ելույթներին։ 1941 թ. Արտաշես Կարինյանը նվիրվել է գիտական աշխատանքին։ 1956 թ. նա ընտրվել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի իսկական անդամ։

Կարինյանը հեղափոխական գործունեությունը զուգակցել է հրապարակախոսական-գրականագիտական աշխատանքների հետ՝ դառնալով հայ մարքսիստական հրապարակախոսական և գրականագիտական մտքի հիմնադիրներից մեկը։ Նրա հոդվածները տպագրվել են ժամանակի հայկական և ռուսական բոլշևիկյան թեր-

Ջերում. այդ թվում և «Գրավոյին էջերում։ Իր հոդվածներով նա գործուն մասնակցություն է ունեցել ժամանակի գրական պայքարին, դրական երևույթների մեծ ակզբունքայնություն և դրական անբասիր ճաշակ։ Հատկապես «Գրավոյին» էջերում տպագրված հոդվածներով նա պայքարել է ժամանակի գրական ռեակցիայի դեմ, ի դեմս դեկադենտիզմի, մատնանշել ռեալիստական գրականության զարգացման հեռանկարներն ու կենսունակությունը։ Հետագայում, 1920-ական թթ. գրական վեճերում նա պայքարել է պրոլետարական գրականությունն անցյալի ժառանգությունից կտրելու փորձերի դեմ, ժամանակի գրական գործիչներին կոչ արել հավատարիմ մնալ դասական արվեստի ավանդույթներին։

«Դեմքեր և դեպքեր» (1928), «Գրական արձագանքներ» (1955), «Գրական-քննադատական հոդվածներ» (1962), «Ժողովուրդների եղբայրության դրոշի ներքո» (1976), «Գրական պատմական ակնարկներ» (1982) ժողովածուներում զետեղված են Կարինյանի գրականագիտական և գրական-քննադատական հոդվածները։ Դրանք վկայում են, թե գիտնականն ինչպես է օր-օրի հետևել սովետահայ գրականության զարգացման ընթացքին, միաժամանակ ստեղծել դասական հայ հեղինակների բազմաթիվ դիմապատկերներ։ Այս առումով ուշադրության արժանի են Կարինյանի ակնարկները՝ նվիրված Աբովյանի, Սիրվանզադեի, Չարենցի, Տերյանի ստեղծագործություններին։

Արտաշես Կարինյանը միաժամանակ ուսումնասիրել է ռուս դասական և ժամանակակից գրականությունը, բազմաթիվ հոդվածներ նվիրել Ռադիշչևի, Պուշկինի, Գոգոլի, Չերնիշևսկու, Չեխովի, Գորկու և այլ գրողների ստեղծագործություններին, հայ և ռուս գրական կապերի հարցերին։

Կարինյանի գիտական հարուստ ժառանգության ամենահետաքրքրական բաժինը նվիրված է հայ պարբերական մամուլի պատմությանը։ Տասնամյակներ շարունակ նա անխոնջ կերպով ուսումնասիրել է հայ պարբերականների հավաքածուները և ստեղծել հայ պարբերական մամուլի գիտական պատմությունը։ Նրա «Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության» մեծարժեք մենագրության երկու հատորները (1956, 1960) նվիրված են Հնդկաստանի հայկական գաղութում և Եվրոպայի երկրներում հրատարակված հայ պարբերականների պատմությանը։

Արտաշես Կարինյանը երիտասարդական ավյունով էր վարում իր իսկ նախաձեռնությամբ ստեղծված հայ պարբերական մամուլի պատմության բաժնի վարիչի պարտականությունները։ Նա գործուն մասնակցություն ուներ Հայաստանի գիտությունների ակադեմիայի նախագահության ընթացիկ աշխատանքներին, երբ վարում էր հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղարի (1960—1963), ապա փոխպրեզիդենտի (1963—1965) պաշտոնները։

Իր մեծ վաստակի, կոմունիստական կուսակցությանն ու սովետական ժողովրդին մատուցած ծառայությունների համար Արտաշես Բալասիի Կարինյանն արժանացել է սոցիալիստական աշխատանքի հերոսի բարձր կոչման, պարգևատրվել Լենինի, Հոկտեմբերյան հեղափոխության, Աշխատանքային կարմիր դրոշի շքանշաններով և մեդալներով։

Մ. Հ. ՄԵԼԻՔԱՐՅԱՆ